ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 06-Ա

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 85-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին մասի 1-ին կետի բ/ ենթակետի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N631-Ն որոշման պահանջներով **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**

1.Ստեղծել Մասիս քաղաքային համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով, հաստատել անհատական կազմը, սահմանել հանձնաժողովի նախագահին.

Հանձնաժողովի նախագահ՝

Խորեն Արոյան - քաղաքապետի տեղակալ

Անդամներ՝

Սերգեյ Կիրակոսյան - քաղաքապետի օգնական

Լուսինե Աստաբացյան - համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ

Ռուբեն Աթանեսյան - համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ

Տիգրանուհի Սուքեյան - համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Աշոտ Հարությունյան - Մասիսի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Անահիտ Հակոբյան - ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքային համայնքի թիվ 3 մանկապարտեզ ե համայնքային ոչ առևտրային կազմակերպության բուժքույր:

2.Ուժը կորցրած ճանաչել Մասիս քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 85-Ա որոշումը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

			Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	Պապիկ	Աբգարյան			
2.	Վաչագան	Աբգարյան			
3.	Արսեն	Եղիազարյան			
4.	Խաչիկ	Խաչատրյան			
5.	Սամվել	Հովհաննիսյան			
6.	Արման	Ղազարյան			
7.	Էդվարդ	Մարգարյան			
8.	Արմեն	Մարտիրոսյան			
9.	Աբրահամ	Շահվերդյան			
10.	Սարգիս	Ռաֆայելյան			
11.	Գարիկ	Սավադյան			

12.	Էդմոնդ	Ստեփանյան	
13.	Վահան	Վարդանյան	
14.	Գեղամ	Փահլևանյան	

Համայնքի ղեկավար՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 07-Ն

ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՐԴԱՏԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝**

1.Թույլատրել համայնքի ղեկավարին Մասիսի քաղաքապետարանին պատկանող GAZ-3102-751 մակնիշի, 001 SS 81 պետհամարանիշի 2007 թվականի արտադրության /ներկայումս չգործող/ և TOYOTA COROLLA մակնիշի,277 LL 70 պետհամարանիշի 2014 թվականի արտադրության /ներկայումս գործող/մարդատար ավտոմեքենաները օտարել աճուրդային եղանակով:

2.Օտարվող ավտոմեքենաների մեկնարկային գին սահմանել ,,ԱՐՏԿԱՊԻՏԱԼ,, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից գնահատած արժեքը՝ GAZ-3102-751 մակնիշի ավտոմեքենայի համար յոթ հարյուր հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ և TOYOTA COROLLA մակնիշի ավտոմեքենայի համար չորս միլիոն ինը հարյուր հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ/համաձայն կից գրությունների/:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

			Կողմ	դեմ	ձեռնպահ
1.	Պապիկ	Աբգարյան			
2.	Վաչագան	Աբգարյան			
3.	Արսեն	Եղիազարյան			
4.	Խաչիկ	Խաչատրյան			
5.	Սամվել	Հովհաննիսյան			
6.	Արման	Ղազարյան			
7.	Էդվարդ	Մարգարյան			
8.	Արմեն	Մարտիրոսյան			
9.	Աբրահամ	Շահվերդյան			
10.	Սարգիս	Ռաֆայելյան			
11.	Գարիկ	Սավադյան			
12.	Էդմոնդ	Ստեփանյան			
13.	Վահան	Վարդանյան			
14.	Գեղամ	Փահլևանյան			

Համայնքի ղեկավար՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

«ԱՐՏԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ
«ARTCAPITAL» LLC
«АРТКАПИТАЛ» ООО

ՀՀ,ք.Երևան,Ն.Զարյան 22- 307
Հեռ (+37410) 251214
էլ փոստ: calorie@bk.ru

22, N. Zarvan Street, Apt. 307,Yerevan, RA
Phone: (+37410) 251214.
E-mail: calorie@bk.ru

РА, г.Ереван,ул.Н. Зарьяна 22- 307
телефон: (+37410) 251214.
эл почта: calorie@bk.ru

23 հունվարի 2017 թ. N/ 01/23-2

Մասիսի քաղաքապետ

Պ-ն՝ Դ.Համբարձումյանին

Հարգելի պ-ն Համբարձումյան

Համաձայն Ձեր հետ 17.01.2017թ. կնքած թ. 01/17-06 պայմանագրի, շուկայական արժեքի որոշման նպատակով, մեր կողմից կատարվել է Մասիսի քաղաքապետարանին պատկանող TOYOTA COROLLA մակնիշի, 277 LL 70 պետհամարանիշով, 2014թ. արտադրության, տեխնիկապես բավարար, գործող վիճակում գտնվող/վազքը ~105000 կմ/, սպիտակ մարգարիտ գույնի մարդատար ավտոմեքենայի գնահատման աշխատանքները:

Հայտնում եմ Ձեզ, որ նշված ավտոմեքենայի սեփականության իրավունքի շուկայական արժեքը, 17.01.2017թ.դրությամբ, կազմում է

4 950 000 (Չորս միլիոն ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Կից ներկայացնում եմ հաշվետվությունը – 12 էջից:

Հարգանքներով՝
Արտկապիտալ՝ ՍՊԸ-ի տնօրեն Ա.Աբրահամյան

«ԱՐՏԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ
«ARTCAPITAL» LLC
«АРТКАПИТАЛ» ООО

ՀՀ ք.Երևան,Ն.Զարյան 22/307
Հեռ (+374 10) 251214
էլ.փոստ: calorie@bk.ru

22 N. Zaryan Street Ap. 307 Yerevan RA
Phone (+374 10) 251214
E-mail: calorie@bk.ru

ՌԱՀ г.Ереван,ул.Н.Зарьяна 22-307
телефон: (+374 10) 251214
электронная почта: calorie@bk.ru

23 հունվարի 2017 թ. N/ 01/23-3

Մասիսի քաղաքապետ

Պ-ն՝ Դ.Համբարձումյանին

Հարգելի պ-ն Համբարձումյան

Համաձայն Ձեր հետ 17.01.2017թ. կնքած թ. 01/17-06 պայմանագրի, շուկայական արժեքի որոշման նպատակով, մեր կողմից կատարվել է Մասիսի քաղաքապետարանին պատկանող GAZ-3102-751 մակնիշի, 001 SS 81 պետհամարանիշով, 2007թ. արտադրության, տեխնիկապես անբավարար, չգործող վիճակում գտնվող, /սև/ ավանտյուրին գույնի) մարդատար ավտոմեքենայի գնահատման աշխատանքները:

Հայտնում եմ Ձեզ, որ նշված ավտոմեքենայի սեփականության իրավունքի շուկայական արժեքը, 17.01.2017թ. դրությամբ, կազմում է

750 000 (Յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Կից ներկայացնում եմ հաշվետվությունը – 12 էջից:

Հարգանքներով՝
Արտկապիտալ՝ ՍՊԸ-ի տնօրեն Ա.Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 08-Ա

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՀԱՇՎԱՐԿԵԼԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՈՒՄԸ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ՄՈՒՏՔԱԳՐԵԼԸ ,,ՄԱՔՈՒՐ ՄԱՍԻՍ,, ՓԲԸ-ԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ, ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 75-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, ,,Աղբահանության և սանիտարական մաքրման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ,14-րդ հոդվածների, 19-րդ հոդվածի, ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ/ ենթակետի պահանջներով **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝**

1.Սահմանել աղբահանության վճար վճարողների հաշվառման կարգը համաձայն N1 հավելվածի:

2.Համայնքի աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճար հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը և բյուջետային հաշիվ մուտքագրելը վերապահել ,,Մաքուր Մասիսի,, ՓԲԸ-ին:

3.Հաստատել սանիտարական մաքրման սխեման համաձայն N2 հավելվածի:

4.Հաստատել աղբահանության սխեման համաձայն N3 հավելվածի:

5.Ուժը կորցրած ճանաչել Մասիս քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 75-Ա որոշումը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

			Կողմ	դեմ	ձեռնպահ
1.	Պապիկ	Աբգարյան			
2.	Վաչագան	Աբգարյան			
3.	Արսեն	Եղիազարյան			
4.	Խաչիկ	Խաչատրյան			
5.	Սամվել	Հովհաննիսյան			
6.	Արման	Ղազարյան			
7.	Էդվարդ	Մարգարյան			
8.	Արմեն	Մարտիրոսյան			
9.	Աբրահամ	Շահվերդյան			
10.	Սարգիս	Ռաֆայելյան			
11.	Գարիկ	Սավադյան			
12.	Էդմոնդ	Ստեփանյան			
13.	Վահան	Վարդանյան			
14.	Գեղամ	Փահլևանյան			

Համայնքի ղեկավար՝ **ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

Հավելված 1
Մասիս քաղաքային համայնքի ավագանու

2017թ. հունվարի 23 -ի թիվ 08 - Ա որոշման

ԿԱՐԳ
ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքային համայնքի
վարչական տարածքում կենցաղային աղբի հեռացման աշխատանքների իրականացման, աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման ու գանձման

1. Ընդհանուր դրույթներ.

1.1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) կարգավորվում են Մասիս համայնքի վարչական տարածքում (այսուհետ՝ Համայնք) կենցաղային աղբի հավաքման, հեռացման աշխատանքների իրականացման, աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման հետ կապված հարաբերությունները:

1.2. Համայնքում կենցաղային աղբի հեռացման աշխատանքների իրականացման, աղբահանության վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Թափոնների մասին>>, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>>, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:

2.Կենցաղային աղբի հեռացման աշխատանքների իրականացնողը.
2.1. Համայնքում կենցաղային աղբի հեռացման աշխատանքներն (այսուհետ՝ աղբահանություն) իրականացվում է ,Մաքուր Մասիսե փակ բաժնետիրական ընկերության կողմից:

2.2. Համայնքում աղբահանությունը կատարվում է Համայնքի ավագանու (այսուհետ՝ Ավագանի) հաստատած սխեմայով տեղադրված աղբարկղներում, կոնտեյներներում կենցաղային աղբը կուտակելու և հեռացնելու միջոցով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնների և նորմերի պահանջների համապատասխան:

2.3. Աղբահանության իրականացման կարգը, այդ թվում՝ աղբահանության իրականացման նվազագույն ժամանակացույցը, աղբամանների կամ կոնտեյներների տեղադրման վայրերը, դրանց տեսակները և քանակը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնները և նորմերի պահանջները: Ընդ որում, աղբը պետք է փոխադրվի մինչև կոնտեյներների ամբողջությամբ լցվելը

2.4. Համայնքի աղբահանության դիմաց վճարողների հաշվառումը, աղբահանության վճարի հաշվարկումը, ինչպես նաև վճարի գանձումն սահմանվում է ըստ ավագանու սահմանած դրույքաչափերի համապատասխան:

2.5. Համայնքի աղբահանության դիմաց վճարողների հաշվառումն, աղբահանության վճարի հաշվարկումն, ինչպես նաև վճարի գանձումն իրականացվում է ,Մաքուր Մասիսե փակ բաժնետիրական ընկերության միջոցով:

2.6. ,Մաքուր Մասիսե փակ բաժնետիրական ընկերությունը համայնքի ղեկավարին է ներկայացնում ամսական հաշվետվություն՝ հաշվետու ժամանակաշրջանում աղբահանության դիմաց վճարի հաշվարկման ու գանձման գործառույթների իրականացման արդյունքների վերաբերյալ:

2.7. ,Մաքուր Մասիսե փակ բաժնետիրական ընկերությունը համայնքի ղեկավարին է ներկայացնում ամսական տեղեկատվություն՝ աղբահանության վճար վճարող անձանց ցանկի և դրանում կատարվող փոփոխությունների մասին:

2.8. Համայնքի ղեկավարն իրավասու է ցանկացած ժամանակ վերահսկել օպերատորի կողմից սույն կարգով վերապահված գործառույթների և պարտականությունների պատշաճ և որակյալ կատարման նկատմամբ:

3. Աղբահանության դիմաց գանձվող վճարների դրույքաչափերի և սակագների սահմանումը, դրանց վճարողների հաշվառումը, հաշվարկումն ու գանձման ժամկետը.

3.1. Աղբահանության դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը և սակագները սահմանում է Ավագանին:
3.2. Աղբահանության դիմաց վճարը համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է:
3.3. Աղբահանության դիմաց նախատեսված վճարների սակագները փոփոխելու պահից կատարվում է վերահաշվարկ, իսկ վճարումները կատարվում են ըստ նոր սակագների՝ նոր սակագնի ուժի մեջ մտնելու պահից:
3.4. Աղբահանության դիմաց վճարողներ են հանդիսանում <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված իրավաբանական և ֆիզիկական անձինք (այսուհետ՝ Սուբյեկտ):
3.5. Աղբահանության դիմաց վարձավճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատված է համարվում օրացույցային ամիսը:
3.6. Աղբահանության դիմաց վճարման ժամկետը սահմանվում է մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը:
3.7. Աղբահանության դիմաց վճարների կետանցման յուրաքանչյուր օրվա համար Սուբյեկտը վճարում է տույժ՝ <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:
3.8. Աղբահանության դիմաց վճարումները իրականացվում են բանկային փոխանցման միջոցով, կամ կանխիկ վճարվում են ,Մաքուր Մասիսե փակ բաժնետիրական ընկերության կողմից համապատասխան լիազորություն ունեցող անձանց՝ (այսուհետ՝ Գործակալ), կամ համայնքի ղեկավարի կողմից սահմանված անձանց՝ դրամարկղի մուտքի օրդերի հիման վրա:
3.9. ,Մաքուր Մասիսե փակ բաժնետիրական ընկերությունը իրականացնում է Գործակալի կողմից գանձման անդորրագրերի կտրոնների ընթացիկ հաշվառման, համադրման, անդորրագրերի մնացորդների և հայտի դեպքում՝ անդորրագրերի նոր խմբաքանակների տրամադրման աշխատանքները:
3.10. ,Մաքուր Մասիսե փակ բաժնետիրական ընկերության աղբահանության դիմաց գանձված վճարները յուրաքանչյուր շաբաթվա ուրբաթ օրը մուտքագրում է Համայնքի բյուջե:
3.11. Աղբահանության վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման և համայնքի բյուջե մուտքագրման կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը:

Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Գաբրիելյան

Հավելված 2
Մասիս քաղաքային համայնքի ավագանու

2017թ. հունվարի 13 -ի թիվ 03- Ա որոշման

Հավելված 2

ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ ՍԱՆՄԱՔՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԽԵՄԱ

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր
Պետք է իրականացվի Մասիս քաղաքային համայնքի տարածքի ձեռքի և մեքենայական մաքրման, (լվացման՝ ըստ հանձնարարման), սանիտարական մաքրման ծառայություններ: Ծառայությունները պետք է իրականացվեն շաբաթական 5 օր պարբերականությամբ, փողոցների, հրապարակների, զբոսայգու, պուրակների, մայթերի, սիզամարգերի մաքրումը աղբից, տերևակույտերից, փոշուց, դրանց բարձումը ավտոինքնաթափին, տեղափոխումը և տեղադրումն աղբավայր: Ամառային մաքրման աշխատանքները պետք է ավարտվեն առավոտյան ժամը 8:30-ին: Փողոցների, մայթերի, աստիճանների, գազոնների ամառային մաքրման ժամանակ հավաքարարը պետք է ապահովի սպասարկվող տարածքներից աղբի ու փոշու հեռացումը, բարելավի միկրոկլիման և նվազեցնի օդի փոշոտվածության աստիճանը, ինչպես նաև պետք է ապահովված լինի սեզոնային համապատասխան ազդանշանային արտահագուստով: Սահմանված նորմերին համապատասխան կցված սպասարկվող տարածքի սահմաններում՝ սկսելով աշխատանքը, հավաքարարը նախ և առաջ պետք է մաքրի համապատասխան տարածքը, իսկ մեքենայական մաքրման դեպքում՝ նրա մի մասը, մերձվածքային տարածքը (0,75մ. լայնությամբ գոտիով՝ եզրաքարերից հաշված): Հիմնական մաքրումն իրականացնելուց հետո հավաքարարը պետք է հետևի սպասարկվող տարածքի մաքրությանը, հավաքի ծխախոտի մնացորդները, թղթի կտորները և այլ աղբի մնացորդները, հնարավորին չափով մաքրի մայթերը, մերձվածքային մասը, տեղադրված աղբարկղերի շրջակայքը և տարածքների մաքրությունն ապահովող այլ պարտականություններ: Մաքրվող տարածքներից հավաքարարն աղբը պետք է մաքրի ավլելու միջոցով՝ օգտագործելով նաև գոգաթիակ: Ձմեռային մաքրման ժամանակ պետք է ապահովվի սպասարկող տարածքի ձյան շերտի մաքրումը, հավաքումը և կուտակումը, ինչպես նաև երթևեկելի մասերի սառցածածկույթի վերացումը: Բացի այդ, պետք է ապահովվի փողոցների, մայթերի ու քաղաքային հրապարակի մաքրությունը ձյան տեղումների միջև ընկած ժամանակաշրջանում: Ձյան ամրացումից խուսափելու նպատակով տեղումների սկզբնական շրջանում նպատակահարմար է ձյունը մշակել ավազի և աղի խառնուրդով: Սառցակալած կամ պնդացած ձյան շերտը պետք է մաքրվի այն նախապես քայքայելուց կամ ջարդելուց հետո: Ամառային մաքրումն իրականացվում է 9 ամիսների, իսկ ձմեռայինը՝ 3 ամիսների ընթացքում: Ըստ սպասարկվող տարածքների, փողոցների՝ ձմեռային մաքրումը պետք է կատարվի նույն հերթականությամբ, ինչ-որ ամառային մաքրման դեպքում: 1) **Ձեռքով մաքրվող տարածք – 89 680 մ^2** 2) **Մեքենայացված մաքրում - 95 550 մ^2** 3) Սեփական աղբավայր կամ որևէ աղբավայրի հետ պայմանագիր՝ տարեկան 20000տ աղբ տեղափոխելու և տեղադրելու համար: 4) Տեխնիկական հավաքակայանի առկայություն: 5) Տեխնիկական հավաքակայանում մեխանիկական արտադրամասի կամ

վերանորոգման արհեստանոցի առկայություն:

6) Ձմեռային շրջանի համար աղի և ավազի պահեստ:
7) Աշխատակազմի համար հանդերձարան և լվացարան:
8) Աղբատար մեքենաների, կցասայլերի, ջրցան մեքենայի լվացման և ախտահանման համար կահավորված լվացման կետ կամ լվացող ավտոմեքենա:

Ձեռքով մաքրվող տարածքներն են՝

Սուրբ Գևորգ եկեղեցու հարող տարածք – 1000 մ^2
Երևանյան փողոց (ներառյալ մայթեր) - լայն. 6 մ, երկ. 2260 մ, ընդ. 13500 մ^2
Հանրապետության փողոց (ներառյալ մայթեր) - լայն. 6 մ, երկ. 1713 մ, ընդ. 10300 մ^2
Արարատյան փողոց (ներառյալ մայթեր և ВТБ բանկի դիմացի հրապարակ 300 մ^2) - լայն. 4 մ, երկ. 600 մ, ընդ. 2700 մ^2
Կենտրոնական հրապարակ և հարող տարածքները և մայթերը - ընդ. 15800 մ^2
Հերացու փողոց (ներառյալ մայթեր) - լայն. 4 մ, երկ. 770 մ, ընդ. 3000 մ^2
Հերացու փողոց I նրբանցք (Զինկոմիսարիատ) - լայն. 4 մ, երկ. 120 մ, ընդ. 480 մ^2
Դպրոցականների փողոց (ներառյալ մայթեր) - լայն. 4մ, երկ. 980 մ, ընդ. 4000 մ^2
Դպրոցականների փողոց I նրբանցք (ներառյալ մայթեր) - լայն. 6մ, երկ. 350մ, ընդ. 2100մ^2
Դպրոցականների փողոց II նրբանցք (ներառյալ մայթեր)- լայն. 6մ, երկ. 200մ, ընդ. 1200մ^2
Ազատամարտիկների փողոց - լայն. 6 մ, երկ. 700 մ, ընդ. 4200 մ^2
Բազմաբնակարան շենքերի (թվով 62) բակերը - լայն. 6մ, երկ. 50մ, ընդ. 300 մ^2 x 62=18600 մ^2
Բազմաբնակարան շենքերի խաղահրապարակներ (ն/թ 25շ., 32շ., 3-րդ թաղ. 1շ., 2շ.) - ընդ. 1200 մ^2 x 4 = 4800 մ^2
Մասիս Կայարան - լայն. 4 մ, երկ. 2000 մ, ընդ. 8000 մ^2

Մեխանիզացված սանմաքրվող տարածքներն են՝

Սուրբ Գևորգ եկեղեցու հարող տարածք – 1000 մ^2
Երևանյան փողոց - լայն. 10մ, երկ. 2260 մ, ընդ. 22600 մ^2
Հանրապետության փողոց - լայն. 10 մ, երկ. 1713 մ, ընդ. 17130 մ^2
Արարատյան փողոց - լայն. 5 մ, երկ. 600 մ, ընդ. 3000 մ^2
Կենտրոնական հրապարակ և հարող տարածքները - ընդ. 11000 մ^2
Հերացու փողոց - լայն. 10 մ, երկ. 770 մ, ընդ. 7700 մ^2
Հերացու փողոց I նրբանցք (Զինկոմիսարիատ) - լայն. 6 մ, երկ. 120 մ, ընդ. 720 մ^2
Դպրոցականների փողոց - լայն. 6մ, երկ. 980 մ, ընդ. 5900 մ^2
Դպրոցականների փողոց I նրբանցք - լայն. 6մ, երկ. 350մ, ընդ. 2100մ^2
Դպրոցականների փողոց II նրբանցք - լայն. 6մ, երկ. 200մ, ընդ. 1200մ^2
Ազատամարտիկների փողոց - լայն. 6մ, երկ. 720 մ, ընդ. 4200 մ^2
Մասիս Կայարան - լայն. 10 մ, երկ. 2000 մ, ընդ. 20000 մ^2

Թափառող կենդանիների վնասազերծման ծառայությունների տեխ. բնութագրերն են՝

1) Գերեզմանատեղի առկայություն վնասազերծումից հետո թափառող կենդանիներին սան. նորմերին համապատասխան թաղելու համար:
2) Ինքնաթափ կամ տրակտոր կցորդիչով՝ կենդանիների դիերը հավաքելու համար:
3) Ջրցան մեքենա (հետևանքների լվացման և ախտահանման համար)
4) Աշխատակազմի համար հանդերձարան և լվացարան:
5) Նորմատիվներին համապատասխան պատին ամրացված չիրկիզվող պահարան՝

զինամթերքի պահպանման համար:

6) Թափառող կենդանիների վնասազերծում 1 ամսվա ընթացքում 3 ուղերթից ոչ պակաս:
7) Ճանապարհային պատահարների հետևանքով սատկած կենդանիների հավաքում և թաղում:
8) Նախատեսվում է 1 տարվա ընթացքում վնասազերծել 400 թափառող կենդանի:

Կանաչ տարածքների ստեղծման և պահպանման ծառայություններ (տարածքը՝ 2.6 հա)

Քաղաքի տարածքի և մայթեզրի հատած, չորացած, փոխարինման ենթակա ծառերի տնկում նախկին տեղում: Որպես տնկիներ օգտագործել նշված տարածքում արդեն գոյություն ունեցող տեսակը: Հիմնականում տնկիները կարող են լինել թխկի, հացի, բարդի և լորենի տեսակներ: Տնկիները պետք է լինեն 2 – 3 տարեկան: Ծառերի ճյուղերի էտում և ձևավորում: Էտումից հետո պահպանվող մասը պետք է ունենա ոչ պակաս 2 մ բարձրություն: Վերին մասում անհրաժեշտ է պահպանել հիմնական ճյուղերի բարձրություն մինչև 50 սմ: Ծառատունկի իրականացում դեկորատիվ ծառերով: Ծառաբների էսթետիկ և պահպանողական սպիտակեցում համապատասխան լուծույթով, ձեռքով: Սպիտակեցնող լուծույթի պատրաստում: Կրային լուծույթը պետք է ունենա համապատասխան բաղադրություն և խտություն, համապատասխան գործող նորմերի: Ծառաբների հողի մաքրում, փխրեցում: Փխրեցումը իրականացնել ձեռքով՝ չվնասելով ծառարմատները: Փխրեցրած տարածքը մաքրել ավելորդ հողից: Նորատունկ ծառերի ոռոգում և խնամք: Ոռոգումը պետք է իրականացնել՝ ելնելով եղանակային անհրաժեշտությունից:

Թփապատվող տարածքների մաքրում աղբից, չորացած ճյուղերից և տերևներից: Տարածքների մաքրումը անհրաժեշտ է իրականացնել ձեռքով՝ փոցխելով տարածքը: Աղբը բարձվում է ինքնաթափին և տեղափոխվում է աղբավայր: Գոյություն ունեցող թփերի խնամք, էտում, հողի փխրեցում, ոռոգում: Աշխատանքները իրականացնել ըստ նախագծի և ճարտարապետական էսթետիկ պահանջով: Հողի փխրեցումը և թփերի ոռոգումը իրականացնել ըստ պահանջի:

Խոտածածկերի և սիզամարգերի տակ գտնվող տարածքների մաքրում աղբից և չորացած տերևներից: Աշխատանքները իրականացնել ձեռքով և ձեռքի պարզ գործիքներով: Բնահողի փխրեցում և հարթեցում: Աշնանային ցրտահերկից հետո գարնանը կատարել տարածքի բնահողի հարթեցում՝ նախապատրաստելով ցանքի: Իրականացնել խնամվող խոտածածկերի և սիզամարգերի պարբերական խնամք և հունձ սիզակալսիչով: Խոտածածկերը և սիզամարգերը անհրաժեշտ է պարբերաբար ոռոգել՝ ելնելով եղանակային պայմաններից: Թույլ չտալ խոտի ցողունի երկարությունը անցնի 15 սմ-ը:

Ծաղկանոցների, դեկորատիվ կոմպոզիցիաների տարածքների մաքրում աղբից: Տարածքների մաքրումը իրականացվում է ձեռքով: Աղբը բարձվում է ինքնաթափին և տեղափոխվում է աղբավայր: Ծաղկանոցների և դեկորատիվ կոմպոզիցիաների տարածքների փորում-փխրեցումը ձմռան ցրտահերկից հետո իրականացվում է վաղ գարնանը, ձեռքով՝ կատարելով տարածքի փոցխում, հարթեցում: Միամյա և բազմամյա ծաղկատեսակների տնկում (սածիլատնկում): Ծաղկատեսակները՝ ըստ կոմպոզիցիոն ձևավորման, սածիլները՝ առնվազն 1 ծաղիկի առկայությամբ: Ծաղկեպատ տարածքների խնամում, քաղհանում և պայքար վնասատուների ու հիվանդությունների դեմ: Ծաղկանոցները խնամել ագրոտեխնիկական նորմատիվներին համապատասխան, հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի միջոցառումները իրականացնել պահանջվող մասնագիտական և ռեսուրսային մոտեցմամբ:

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	ավարտը
01.01.2017թ.	31.12.2017թ.

Աշխատակազմի քարտուղար *Վ. Գաբրիելյան*

Հավելված 3
Մասիս քաղաքային համայնքի ավագանու

2017թ. հունվարի 23 -ի թիվ 08 - Ա որոշման

ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ս Խ Ե Մ Ա

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր
• Քաղաքի վարչական տարածքում գտնվող հիմնարկ-ձեռնարկությունների և բնակչության աղբահանության իրականացում: • Սեփական աղբավայր կամ որևէ աղբավայրի հետ կնքած պայմանագիր՝ տարեկան 20.000մ^3 կենցաղային, արտադրական և կոշտ եզրագծով շինարարական աղբի տեղադրման համար: • Տեխնիկական հավաքակայանի առկայություն Մասիս քաղաքից ոչ հեռու քան 10կմ: • Տեխ. հավաքակայանում մեխանիկական արտադրամասի առկայություն (աղբարկղերի, մեքենաների ընթացիկ նորոգումների համար): • 0,6-1մ^3 տարողությամբ նորմատիվներին համապատասխանող 120 հատ սեփական աղբարկղերի առկայություն: • Աղբատար մեքենաների, կցասայլերի և աղբամանների լվացման ու ախտահանման համար կահավորված լվացման կետ կամ լվացող մեքենա կամ դրանց վարձակալման պայմանագրեր: • Աշխատակազմի համար հանդերձարան և լվացարան: • Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, վճարի հաշվարկումը, գանձումը (ֆիզ. և իրավաբանական անձեր) և մուտքագրումը համայնքային բյուջե իրականացվում է օպերատորի միջոցներով: • Ֆիզ. անձանց աղբահան. վճար (փաստացի բնակվող) – 1շունչը՝ 180 դրամ (ավագանու որոշում 24.12.2012թ. № 75-Ա) • Իրավաբան. անձանց աղբահան. վճար – 1մ^3՝ 2700 դրամ (ավագանու որոշում 24.12.2012թ. № 75-Ա) • Կոշտ հավելվածքի համար – 1տն՝ 8000 դրամ (ավագանու որոշում 24.12.2012թ. № 75-Ա) **Կից ներկայացվում է Մասիս քաղաքի փողոցների և բազմաբնակարան շենքերի աղբահանության սխեման՝** • I-III, V-X փողոցներ - շաբաթական 1 անգամ ինքնաթափով կամ տրակտոր կցասայլով: • Երևանյան փողոց - շաբաթական 3 անգամ ինքնաթափով կամ տրակտոր կցասայլով: • II թ. I-V փողոցներ - շաբաթական 1 անգամ ինքնաթափով կամ տրակտոր կցասայլով: • I թ. I-VI փողոցներ - շաբաթական 1 անգամ ինքնաթափով կամ տրակտոր կցասայլով: • IV թ. I-III փողոցներ - շաբաթական 1 անգամ ինքնաթափով կամ տրակտոր կցասայլով: • V թ. I-IV փողոցներ - շաբաթական 1 անգամ ինքնաթափով կամ տրակտոր կցասայլով: • VI թ. I-IV փողոցներ - շաբաթական 1 անգամ ինքնաթափով կամ տրակտոր կցասայլով: • Ն/թ I փողոց - շաբաթական 1 անգամ ինքնաթափով կամ տրակտոր կցասայլով: • *Բազմաբնակարան շենքերի աղբահանությունը պետք է կատարվի ամեն օր՝ ինքնաբեռնավորիչ մեքենայով:* • V փող. թիվ 34 շ. – 4 աղբարկղ • IIIթ. Հերացու փող. 17-րդ շենքի դիմաց – 6 աղբարկղ • IIIթ. Հերացու փող. 11-րդ շենքի դիմաց – 6 աղբարկղ • IIIթ. № 3 դպրոցի ցանկապատի դիմաց – 4 աղբարկղ • IIIթ. թիվ 12 հանրակացարան 37 մ/շենքի դիմաց – 4 աղբարկղ

- IIIթ. թիվ 18-րդ շենքի դիմաց – 5 աղբարկղ
- Հերացու փող. շուկայի դիմաց – 3 աղբարկղ
- Կենտրոնական հրապարակի կանգառ - 3 աղբարկղ
- Երաժշտական դպրոցի դիմաց – 4 աղբարկղ
- Քաղաքապետարանի վարչական շենքի դիմաց - 2 աղբարկղ
- Ն/թ թիվ 37 շենքի դիմաց – 4 աղբարկղ
- Ն/թ թիվ 1 մանկապարտեզի դիմաց – 6 աղբարկղ
- Ն/թ թիվ 8 շենքի դիմաց – 4 աղբարկղ
- Ն/թ թթ 3-4-րդ շենքերի դիմաց – 6 աղբարկղ
- Ն/թ Միլենա սուպերմարկետի դիմաց – 9 աղբարկղ
- Ն/թ Ազատամարտիկների փող. խաղահրապարակի դիմաց - 7 աղբարկղ
- Ն/թ թիվ 35 շենքի դիմաց – 6 աղբարկղ
- Կինոյի տան դիմաց – 2 աղբարկղ
- Միկա բենզակցակայանի դիմաց - 2 աղբարկղ
- թթ. 38-39-րդ շենքերի դիմաց - 4 աղբարկղ
- Ն/թ թիվ 29 շենքի դիմաց – 4 աղբարկղ
- Թիվ 1 մանկապարտեզի տարածք - 1 աղբարկղ
- Թիվ 2 մանկապարտեզի տարածք - 1 աղբարկղ
- Թիվ 3 մանկապարտեզի տարածք - 1 աղբարկղ
- Թիվ 4 մանկապարտեզի տարածք - 1 աղբարկղ
- Թիվ 5 մանկապարտեզի տարածք - 1 աղբարկղ
- Թիվ 7 մանկապարտեզի տարածք - 1 աղբարկղ
- Թիվ 1 հիմնական դպրոցի տարածք - 1 աղբարկղ
- Թիվ 2 հիմնական դպրոցի տարածք - 1 աղբարկղ
- Թիվ 3 հիմնական դպրոցի տարածք - 1 աղբարկղ
- Թիվ 4 հիմնական դպրոցի տարածք - 1 աղբարկղ
- Թիվ 5 ավագ դպրոցի տարածք - 1 աղբարկղ
- Թիվ 6 հիմնական դպրոցի տարածք - 1 աղբարկղ

- *Մասիս Կայարան թաղամասի աղբահանությունը պետք է կատարվի շաբաթը 2 անգամ՝ ինքնաբեռնավորիչ մեքենայով:*
- Գործարանային փողոց թիվ 10 շենքի մոտ - 2 աղբարկղ
- Գործարանային փողոց սրճարանի մոտ - 3 աղբարկղ
- Գործարանային փողոց խաչմերուկի մոտ - 2 աղբարկղ
- Սայաթ-Նովա գյուղի ճանապարհի մոտ - 2 աղբարկղ
- Կայարանի ադմինիստրատիվ շենքի մոտ - 2 աղբարկղ
- Գործարանային փողոց թիվ 16 շենքի մոտ - 4 աղբարկղ
- ՆԳ բաժանմունքի մոտ - 1 աղբարկղ
- Վագոնների բեռնաթափման հրապարակ - 1 աղբարկղ
- Թիվ 14 շենքի մոտ - 1 աղբարկղ
- 2-րդ թաղամաս – 1աղբարկղ

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	Ավարտը
01.01.2017թ.	31.12.2017թ.

Աշխատակազմի քարտուղար

Վ.Գաբրիելյան